

**5.7. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության
2005թ. հուլիս ամսվա մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2005թ. հուլիս ամսին ունեցել է հետևյալ բնութագիրը:

Օդային ավազանի որակի մոնիթորինգ: Հուլիսին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

Վերցվել է օդի 2416 փորձանմուշ, որոշվել են մթնոլորտն աղտոտող վերահսկվող նյութերի կոնցենտրացիաները:

- *Երևան քաղաքում վերցվել է օդի 1365 փորձանմուշ: Որոշվել են փոշու, գետնամերձ օզոնի, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, արոմատիկ ածխաջրածինների ու քլորոպրենի կոնցենտրացիաները: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 3.3, ծծմբի երկօքսիդինը՝ 2.6, ազոտի երկօքսիդինը՝ 3.0, գետնամերձ օզոնինը՝ 3.5, բենզոլինը՝ 1.7 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.7, գետնամերձ օզոնինը՝ 2.2, տոլուոլինը՝ 1.6 անգամ: Հունիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.7, գետնամերձ օզոնինը՝ 1.4, բենզոլինը՝ 1.8, տոլուոլինը՝ 1.2 անգամ:*

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները
ք.Երևանի մթնոլորտում 2005թ. հուլիս ամսին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.5
Ծծմբի երկօքսիդ	0.27	0.13
Ազոտի երկօքսիդ	0.40	0.12
Ազոտի օքսիդ	0.22	0.06
Գետնամերձ օզոն	0.351	0.104
Քլորոպրեն	-	0
Բենզոլ	1.611	0.171
Տոլուոլ	0.984	0.464
Քսիլոլ	-	-
Եթիլբենզոլ	-	-

- *Գյումրի քաղաքում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 25 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.7 անգամ: Հունիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:*
- *Վանաձոր քաղաքում վերցվել է օդի 500 փորձանմուշ: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3, ծծմբի երկօքսիդինը՝ 1.8 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2 անգամ: Հունիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.5 անգամ:*

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները
ք.Վանաձորի մթնոլորտում 2005թ. հուլիս ամսին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.2
Ծծմբի երկօքսիդ	0.22	0.09
Ազոտի երկօքսիդ	0.10	0.04

- *Հրազդան քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 4.0 անգամ: Հունիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.8 անգամ:*
- *Ալավերդի քաղաքում վերցվել են օդի 475 փորձանմուշներ: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 1.3, ծծմբի երկօքսիդինը՝ 9.6 անգամ: Ծծմբի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5 անգամ: Հունիս ամսվա համեմատ որոշվող նյութերի կոնցենտրացիաների էական փոփոխություն չի դիտվել:*

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները
ք.Ալավերդու մթնոլորտում 2005թ. հուլիս ամսին**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.2
Ծծմբի երկօքսիդ	0.75	0.48
Ածխածնի օքսիդ	5.0	2.0
Ազոտի երկօքսիդ	0.09	0.03

- *Արարատ քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 25 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 5.0 անգամ: Հունիս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:*

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: Հուլիսին մակերևութային ջրերի մուշտառ կատարվել է հանրապետության 14 գետերից, Երևանյան լճից, Սևանա լճից և Արփա-Սևան թունելից: Վերցվել է 50 փորձանմուշ, որոշվել է 39-43 ցուցանիշ:

Փամբակ և Դեբեդ գետերի ավազաններից վերցված փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.1-1.5 անգամ, նիտրիտ իոնինը՝ 2.3-3.1 անգամ (Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածքում համապատասխանաբար՝ 6.0 և 4.5 անգամ):

Ախթալա գետի գետաբերանի շրջանում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 4.5 անգամ:

Սևջուր, Հրազդան, Քասախ գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել են ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, մագնեզիումի, պղնձի և մանգանի ՍԹԿ-ները:

Հրազդան գետում՝ Դարբնիկ գյուղի և գետաբերանի մոտ ընկած հատվածքներում, դիտվել է արտակարգ բարձր աղտոտվածություն՝ լուծված թթվածնի պարունակությունը կազմել է համապատասխանաբար 0.50 մգ/դմ³ և 1.65 մգ/դմ³: Հրազդան գետում՝ Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում, ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 11.0 անգամ:

Հրազդան գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքում և Երևանյան լճում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է համապատասխանաբար 12.8 և 14.8 անգամ: Վերցված մյուս փորձանմուշներում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.1-3.7, նիտրիտ իոնինը՝ 1.6-9.2 անգամ:

Սևջուր, Հրազդան գետերում և Գետառ գետի գետաբերանի հատվածքում մագնեզիումի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-2.1, մանգանինը՝ 3.0-8.0 (Դարբնիկ գյուղի մոտ

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ընկած հատվածքում՝ 15.0), վանադիումինը՝ 6.0-16.0 (Գետառի գետաբերանի հատվածքում՝ 20.0), պղնձինը՝ 10.0-20.0 (Դարբնիկ գյուղի մոտ՝ 30), ալյումինիումինը՝ 1.2-1.5 անգամ (Գետառի գետաբերանի մոտ՝ 7.9 անգամ):

Սևջուր գետում և Երևանյան լճում սուլֆատ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2-1.5-ական անգամ:

Սևանա լճի ավազանի գետերից վերցված փորձանմուշներում վանադիումի ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0-9.0 անգամ (Գավառագետի գետաբերանի շրջանում՝ 16 անգամ): Գավառագետի գետաբերանի շրջանում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 2.5 անգամ:

Սևանա լճից վերցված փորձանմուշներում դիտվել է թթվածնային ռեժիմի անբավարարություն՝ թթվածնի պարունակությունը կազմել է 4.04-5.87 մգ/դմ³: Սևանա լճում 1.8-2.1 անգամ գերազանցվել է նաև մագնեզիումի ՍԹԿ-ն:

Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Սակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը 2005թ. հուլիս ամսին

Գետերի և լճերի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների քանակը						
			ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3 մգ/դմ ³)	Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգ/դմ ³)	Նիտրատ իոն (ՍԹԿ՝ 9.1 մգ/դմ ³)	Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/դմ ³)	Նավթամթերք (ՍԹԿ՝ 0.05 մգ/դմ ³)	Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100 մգ/դմ ³)	Մագնեզիում իոն
Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5կմ ներքև	-	-	-	0.49	-	-	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	-	-	-	0.42	-	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	-	0.108	-	2.35	-	-	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	-	0.074	-	-	-	-	-
	6	Այրումից 0.5 կմ վերև	-	0.065	-	0.52	-	-	-
	7	Սահմանի մոտ	-	0.055	-	0.60	-	-	-
Չորագետ	10	Գետաբերան	-	-	-	0.51	-	-	-
Մարցիգետ	13	Գետաբերան	-	-	-	0.51	-	-	-
Ախթալա	14	Գետաբերան	-	-	-	0.45	-	446.0	-
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	0.058	-	-	-	116.8	62.4
	41	ք.Վաղարշապատից 11կմ հարավ-արևելք	-	0.038	-	-	-	115.3	60.2
	42	Ռանչպար գյուղից 0.5 կմ ներքև	-	0.038	-	-	-	116.8	56.3
Քասախ	47	Գետաբերան	-	0.048	-	-	-	145.8	58.5
Հրազդան	51	Գեղամական գյուղի մոտ	-	-	-	0.47	-	-	58.5
	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	0.41	-	-	83.1
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	-	61.4
	54	Արզնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	-	-	-	-	-	41.2
	55	Դարբնիկ գյուղի մոտ	-	-	-	4.29	-	-	-
	56	Գետաբերան	-	0.307	-	1.449	-	-	-
Մարմարիկ	58	Գետաբերան	-	-	-	-	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	-	0.221	-	0.95	-	-	-
Գավառագետ	78	Գետաբերան	-	0.060	-	-	-	-	-
Ազատ	79	Գետաբերան	-	0.326	-	1.2	-	145.8	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	-	0.355	-	-	-	130.5	-
	115	Թերակղզուց 3.5 կմ արևելք	-	-	-	-	-	-	61.38

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Գետերի և լճերի անվանումը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների քանակը								
		ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3 մգ/դմ ³)	Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	Նիտրատ իոն (ՍԹԿ՝ 9.1 մգN/դմ ³)	Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	Նավթամթերք (ՍԹԿ՝ 0.05 մգ/դմ ³)	Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100 մգ/դմ ³)	Մագնեզիում իոն	Իոնների զումարը (ՍԹԿ՝ 1000 մգ/դմ ³)	
Սևանա լիճ	116	Թերակղզուց 70 ⁰ A	-	-	-	-	-	67.19	-	
	Չկնագետի գետաբերանի շրջանում									
	117	լճի մակերևույթից	-	-	-	-	-	-	73.58	-
		20 մ խորությունից	-	-	-	-	-	-	70.19	-
	118	Շորժա գյուղից 0.5 կմ հարավ- արևմուտք	-	-	-	-	-	-	74.22	-
		Շորժա գյուղից 6 կմ հարավ-արևմուտք								
	119	լճի մակերևույթից	-	-	-	-	-	-	83.46	-
		20 մ խորությունից	-	-	-	-	-	-	75.29	-
	120	Արտանիշից 2 կմ 135 ⁰ A	-	-	-	-	-	-	64.68	-
		լճի մակերևույթից	-	-	-	-	-	-	75.26	-
	121	Փամբակ գյուղից 10 կմ 270 ⁰ A	-	-	-	-	-	-	74.06	-
		լճի մակերևույթից	-	-	-	-	-	-	70.08	-
	122	Փամբակ գյուղից 2.2 կմ 255 ⁰ A	-	-	-	-	-	-	79.45	-
		լճի մակերևույթից	-	-	-	-	-	-	74.28	-
	123	Փամբակ գյուղից 13 կմ 235 ⁰ A	-	-	-	-	-	-	77.09	-
		լճի մակերևույթից	-	-	-	-	-	-	78.90	-
	124	Մասրիկ գետի գետաբերանի շրջանում	-	-	-	-	-	-	78.21	-
	125	Կարճաղբյուր գետի գետաբերանի շրջանում	-	-	-	-	-	-	77.22	-
	126	Արփա-Սևան թունելի ելքի մոտ	-	-	-	-	-	-	76.42	-
	127	Մարտունի գետի գետաբերանի շրջանում	-	-	-	-	-	-	78.54	-
	128	Երանոս գետից 15 կմ 90 ⁰ A	-	-	-	-	-	-	92.32	-
լճի մակերևույթից		-	-	-	-	-	-	76.55	-	
129	Երանոս գետից 24 կմ 90 ⁰ A	-	-	-	-	-	-	78.39	-	
	լճի մակերևույթից	-	-	-	-	-	-	77.84	-	
130	Նորադուս գյուղից 7 կմ հյուսիս-արևմուտք	-	-	-	-	-	-	70.15	-	
	Չկալովկա գյուղից 7.5 կմ հյուսիս									
131	լճի մակերևույթից	-	-	-	-	-	-	78.14	-	
	20 մ խորությունից	-	-	-	-	-	-	71.26	-	